

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.031>

The Introduction of the New Mongol Administrative, Economic and Political System in the Vilayet of Gourjistan in the Mid-13th Century

Lernik Mkrtumyan

<https://orcid.org/0009-0002-7798-9526>

ASUE, YSU, Associate Professor of the Department of Social Sciences of ASUE and the Chair of Theology and History of the Armenian Church of the Faculty of Theology of YSU, PhD

lmkrtumyan2571@gmail.com

Keywords: Mongol Empire, Gurjistan vilayet, North-West Armenia, baskak, Argoun, koupchour, census, Zakarides, Smbat Orbelyan, Hassan-Jalal Dola.

The article is devoted to the period immediately after the conquest of Armenia and Transcaucasia and the cessation of revenues from plunder and robbery, when the Mongols had to find a new way of obtaining a stable and permanent income.

To this end, the Mongols established a system of state administration with a stable political and economic structure in the territories under their control, including the Caucasus and Armenia. The census of 1254 and the subsequent introduction of a heavy poll tax served this purpose.

Guided by the principle of "divide and conquer", the Mongols granted the House of Orbelian of Syunik and the House of Yeranshaheek of Inner Khachen the status of Injou. In this way, they removed their lands from the Zakarian suzerainty. At the same time, a power struggle was developing in Transcaucasia between the great Khans of Karakorum and the Juchids of the Golden Horde. In this struggle, both sides relied on the Georgian-Armenian feudal nobility. As a result of this struggle, royal authority in Georgia was weakened. Both branches of the Zakarid family, the Vakhramids and the Yeransheekes of the Inner Khachen, were also weakened. On the contrary, the influence of the owner of Mahkaneberd, Sadun Artsrouni, and the Armenian branch of the Orbelians has increased.

Մոնղոլական նոր վարչատնտեսական և քաղաքական համակարգի ներդրումը Գյուրջիստանի վիլայեթում XIII դարի կեսին

Լեռնիկ Մկրտումյան

ՀՊՏՀ, ԵՊՀ, ՀՊՏՀ հասարակագիտության ամբիոնի և ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 31-42

Received: 07.06.2024

Revised: 08.07.2024

Accepted: 30.08.2024



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Հիմնաբառեր` Մոնղոլական տերություն, Գյուրջիստանի վիլայեթ, Հյուսիսարևելյան Հայաստան, բասաղաղ, Արդուն, դուփչուր, մարդահամար, Ջաքարյաններ, Սմբատ Օրբելյան, Հասան-Ջալալ Դոլա:

Հողվածում քննվում է մոնղոլների կողմից Հայաստանի ու Այսրկովկասի գրավմանը անմիջապես հաջորդած ժամանակաշրջանը, երբ ռազմավարից ու թալանից ստացվող եկամուտների սպառումը ստիպեց վերջիններիս որոնել և կիրառել կայուն ու մշտական եկամտի ստացման նոր մեթոդներ: Մոնղոլներն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում, այդ թվում` Այսրկովկասում ու Հայաստանում, ներդրեցին վարչաքաղաքական և տնտեսական կայուն կառուցվածք ունեցող համակարգ: Այդ նպատակին էին ծառայում 1254 թ. անկացված մարդահամարը և դրան հետևած ծանր գլխահարկի կիրառումը:

Առաջնորդվելով ՍԲաժանի՝ ը, որ տիրեւսվ սկզբունքով՝ մոնղոլները Սյունիքի Օրբելյանների ու Ներքին Խաչենի Եռանշահիկներին շնորհեցին ինչուի կարգավիճակ: Դրանով նրանք այդ տոհմերի ավատները դուրս բերեցին Ջաքարյանների ենթակայությունից: Միննույն ժամանակ Այսրկովկասի վերահսկողության համար պայքար էր ծավալվել Ղարադորումում նստող մեծ խաների և Որկե Հորդայի Ջուլյանների միջև: Այդ պայքարի շրջանակում երկու կողմերն էլ հենվում էին վրաց-հայկական ավատական վերնախավի վրա: Այդ պայքարը թուլացրեց Վրաստանի թագավորական իշխանությունը, ինչպես նաև թուլացան Ջաքարյանների երկու ճյուղերը, Վահրամյաններն ու Ներքին Խաչենի Եռանշահիկները: Դրան հակառակ՝ մեծացավ Մահականաբերդի տեր Մադուն Արծրունու և Օրբելյանների հայկական ճյուղի ազդեցությունը:

**Внедрение новой административно-экономической и политической системы монголов в вилайете
Гюрджистан в середине XIII века**

Լերник Մկրտյան

ԱԳՄԱ, ԵԳՄ, ղոցենտ կաբեբրա օբշչեսեննա կաբեբրա ԱԳՄԱ և կաբեբրա եոլոգիա և ևստորի Արմաենկոյ
Շերկա եոգոսլոեկոյ ֆաକୁլտետա ԵԳՄ, կ.և.և.

Ключевые слова: Монгольская держава, вилайет Гюрджистан, Северо-Западная Армения, баскак, Аргун, купчур, перепись, Закарнды, Смбат Орбеляны, Хасан-Джалал Дола.

Статья посвящена периоду наступившему сразу после захвата Армении и Закавказья и прекращения доходов от грабежа и трофеев, когда для монголов стал насущным новый способ получения стабильных и постоянных доходов. Для этого монголы ввели на подконтрольных им территориях, включая Закавказье и Армению, государственную систему управления с устойчивой административно-политической и экономической структурой. Перепись 1254 года и последующее введение тяжелой подушной подати служили этой цели.

Руководствуясь принципом «Разделяй и властвуй» монголы предоставили дому Орбелянов Сюника и дому Ераншахигов Внутреннего Хачена статус инджу. Тем самым они вывели их уделы из-под сюзеренитета Закарянов. В то же время разворачивалась борьба за власть в Закавказье между великими ханами Каракорума и Джучидами Золотой орды. В рамках этой борьбы обе стороны опирались на грузино-армянскую феодальную знать. Вследствие этой борьбы ослабла королевская власть в Грузии. А также ослабли обе ветви рода Закаридов, Вахрамиды и Ераншахики Внутреннего Хачена и наоборот усилилось влияние владельца Махканаберда, Садуна Арцруни и армянская ветвь Орбелянов.

* * *

Ներածություն: Հայոց պատմության մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի ավելի ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ մոնղոլների վարչատնտեսական քաղաքականության մասին: Առանց այս հիմնահարցի պարզաբանման անհնար է որևէ օբյեկտիվ եզրակացություն անել Մերձավոր Արևելքում հայ ռազմաքաղաքական վերնախավի խաղացած դերի մասին:

Ավերածությամբ ու թալանով ուղեկցվող Այսրկովկասի ու Հայաստանի նվաճմամբ մոնղոլական վերնախավի ձեռքբերում կենտրոնացան ֆինանսական ու տնտեսական հսկայական միջոցներ: Ձևավորված լայնածավալ տերության պահպանման ու մեծացման համար անհրաժեշտ էին եկամտի նոր և հաստատուն աղբյուրներ: Դրան հասնելու համար մոնղոլներն իրենց տիրապետության տակ գտնվող տարածքներում, այդ թվում՝ Այսրկովկասում ու Հայաստանում, ներդրեցին վարչաքաղաքական և տնտեսական կայուն կառուցվածք ունեցող պետական համակարգ: Ֆինանսահարկային բաղադրիչը այդ համակարգի կարևոր մասն էր կազմում: Էվոյուցիոն ճանապարհով զարգացող այդ բաղադրիչը հարմարեցված էր մոնղոլական աշխարհակալ տերության առանձին տարածաշրջաններում տիրող տարաբնույթ պայմաններին:

Իրանն ու Այսրկովկասը նվաճելուց հետո մոնղոլական բանակի հրամանատար Չարմաղան նոյոնի կողմից հրավիրված դուրուլթայում (ռազմաքաղաքական ավագանու ժողով) տարածաշրջանը բաժանվեց երեք մասի. Որաժանեցին երկիրս միմեանց վերայ եւ արարեալ ընդ երեք մասն զաշխարհս. բաժին մի գնացին ի հիւսիսոյ կողմն, եւ բաժին մի ընդ հարավ եւ բաժին մի ի մեջ երկրիսմ: [Գրիգոր Ակնեբցի, 1974, 26]:

Գրիգոր Ակնեբցու այս հաղորդման մեջ հյուսիսային կողմը Արևելյան Վրաստանն ու Չաքարյաններին ենթակա հայկական տարածքներ էին, որոնք մոնղոլների վարչաքաղաքական համակարգում հայտնի էին Գյուրջիստանի վիլայեթ անվամբ: Հարավը Իրանական Ասորպատականն էր, իսկ Որաժին մի երկրիսմ արտահայտության տակ պետք է հասկանալ Հայաստանի արևմտյան տարածքներն ու Կապադովկիան: Այսպիսով՝ Գյուրջիստանի վիլայեթ անվամբ մոնղոլների տիրապետության օրոք հայտնի էին բուն Վրաստանը, Վանանդը, Վահրամյաններին ենթակա Շամքորը, Գարդման և Տավուշը, Չաքարյաններին պատկանող Լոռին, Շիրակն ու Չաքարյանների ազդեցության տակ գտնվող Արարատյան դաշտը, Սյունիքն ու Արցախը, որոնք բաժանված էին ութ վարչական միավորների՝ թումանների: Այդ թումաններից հինգը վրացական տարածքներ էին, երեքը՝ հայկական: Դրանք էին Շահնշահ Չաքարյանին ուղղակի ենթակա Շիրակը, Վանանդը, ինչպես նաև նրանից վասալական կախման մեջ գտնվող Վաչուտյանների կալվածքները Արագածոտնում, Ավագ Չաքարյանին անմիջականորեն ենթակա

Արարատյան դաշտը, Գեղարքունիքը Լոռին, նրանից վասալական կախման մեջ գտնվող Օրբելյանների տարածքները Սյունիքում ու Առանշահիկների կալվածքները Արցախում, Վահրամյաններին ենթակա Տավուշը, Գարդմանը և Շամքորը [Բաբայան Լ, Երևան, 1964, 120]:

Վիլայեթի վարչական միավորների *թուման* անվանումը վկայում է, որ նրանց ղեկավարները, որոնք հայտնի էին հաքիմ կամ մալիք անունով [Բաբայան Լ, Երևան, 1964, 120], պարտավոր էին մարտադաշտ հանել 10 հազարանոց օժանդակ զորք:

Տարածաշրջանի արդյունավետ տնտեսական շահագործման նպատակով ձևավորվեց կառավարման ռազմավարչական աշխատակազմ, որի առաջին կառավարիչը Չարմաղան նոյնն էր: ԸՄՆդոլների գաղտնի պատմությունն՝ կիսապատմական երկը նշում է, որ Ուզեդեյ խանի (1229-1241) կողմից Չարմաղանը նշանակվեց այս տարածաշրջանում մեծ խանի լիազոր ներկայացուցիչ՝ թամնաչի¹ [The Secret History of the Mongols, Provided with an exegetical Commentary by Francis Cleaves, London, 1982, 214-215]: Համաձայն Ռաշիդ ադ-Դինի՝ Ուզեդեյ-խանը Չարմաղանին՝ որպես լաշքար-թամաչի², 40-հազարանոց բանակով ուղարկեց այդ տարածաշրջան [Рашид ад-Дин, том 1, книга II, Москва, 1952, 87-88]: Ռաշիդ ադ-Դինը նշում է, որ Չարմաղանի իրավասության տակ էին Վրաստանը և նրա կազմում գտնվող հյուսիսային Հայաստանի Չաքարյաններին պատկանող տարածքները, Մեծ Հայքը (հարավային և արևմտյան Հայաստանը), ինչպես նաև Աղվանքն ու Ատրպատականը [Նույն տեղում]: Չարմաղանը՝ որպես շրջանի թամնաչի, մեծ խանի կողմից օժտված էր ռազմական, քաղաքացիական բացարձակ իշխանությամբ: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Չարմաղանի ձեռքում կենտրոնացած էր նաև դատական իշխանությունը [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 275]: Բարձրագույն դատական իշխանություն ունեցողներին, սկսած Չինգիզ խանից (1206-1227), անվանում էին յարդուչի [D. Morgan, Journal of the Royal Asiatic Society, 1982, N. 1, 127-136]:

Պատմիչ Ջուվեյնիի վկայությամբ Չարմաղանի ենթակայության տակ Ուզեդեյ խանը նշանակեց դարուղաչիների ու բասղաղների³ [Джувейни, Москва, 2004, 343]: Դարուղաչիներն ու բասղաղները, լինելով թամնաչիի ստորականները, իրականացնում էին գավառների կառավարումը: Նրանց իրավասության տակ էր հարկերի հավաքագրումը: Վերջիններս պատասխանատու էին սուրհանդակային ծառայության և տեղի բնակչության շրջանում զորքերի հավաքագրման համար: Հայկական աղբյուրներում նրանք կոչվում են ոստիկան [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 362]:

Մոնղոլ մեծ խաների և Բաթու խանի պայքարը մերձավորարևելյան տարածաշրջանի վերահսկողության համար

Չինգիզ խանը նվաճված տարածքների կառավարումը մահից առաջ հանձնեց իր որդիներին: Չնայած Իրտիշից, Արալի ծովից և Ամուդարյա գետից արևմուտք ընկած տարածքները տրվեցին Չինգիզ խանի ավագ որդի Ջուչիին ու նրա ժառանգներին, այնուամենայնիվ Իրանը, Վրաստանն ու

¹ Չինարեն՝ *թամնա, թամնա* – զորք և մոնղոլերեն *չի* վերջացանցից բաղկացած այս բառը նշանակում է «զորապետ»:

² Պարսկերեն՝ լաշքար – բանակ և թամա – զորապետ արմատներից բաղկացած այս բառը նշանակում է բանակի հրամատար:

³ Մոնղոլերեն՝ *դարուղաչի* և *թյուրերեն բասղաղ* բառերը նույնիմաստ են և բառացի թարգմանած նշանակում են «սեղմող՝ փաստաթղթի վրա կնիք դնող»:

Հայաստանը չմտան Ջուջի ուլուսի կազմի մեջ, այլ մնացին մոնղոլական կենտրոնական իշխանության՝ Ղարաղորումում նստող մեծ խանին ուղղակի ենթակա այն նոյնների իշխանության տակ, որոնց հրամանատարությամբ այդ երկրները նվաճվել էին:

Ջուջի որդի Բաթու խանը չէր հրաժարվում այդ հարուստ երկրամասի նկատմամբ հավակնությունից: Նրան հաջողվեց 1233 թ. Խորասանն ու Մազանդարանը դուրս բերել Չարմաղանի իշխանությունից, և հանձնել իր ներկայացուցիչ Չին-Թեմուրին [Джузейни, Москва, 2004, 346]: 1236 թ. Չին-Թեմուրի մահից հետո այդ նահանգները Ուզեդեյ խանը վերադարձրեց Չարմաղանին, իսկ վերջինիս ենթակա տարածաշրջանում դարուղաչի նշանակվեց Կորդուզը [Джузейни, Москва, 2004, 356]: Այս պայքարի շրջանակում պետք է դիտարկել Ուզեդեյի մահից հետո Կորդուզի պաշտոնանկ արվելն ու մահապատժի ենթարկվելը: Բաթուի նկատմամբ ասելությամբ լցված Ուզեդեյի այրին մոնղոլական տերության խնամակալ Դյորեգենե-խաթունը նոր դարուղաչի նշանակեց Արդուն-աքային: Վերջինս Թավրիզում հանդիպեց կաթվածահար Չարմաղանին փոխարինած Բաչուի և նրա աջակիցների թշնամական վերաբերմունքին [Jakson Peter, Central Asiatic Journal, Vol. 22, 1978, 216-219]:

Բաչուի քաղաքական կողմնորոշման վերաբերյալ մասնագետների կարծիքները իրարամերժ են: Բրիտանացի հեղինակ Պ. Ջեկսոնի համոզմամբ Բաչուին միայն Բաթու խանի գործուն աջակցությամբ էր հաջողվել թամաչիի պաշտոնում հաջորդել անգործունյա դարձաց Չարմաղանին [Jakson Peter, Central Asiatic Journal, 1978, Vol. 22, 216-219]: Դրան հակառակ՝ ռուս պատմաբան Պոչեկանը պնդում է, որ Բաթու խանի և Բաչու նոյնի հարաբերությունները թշնամական էին [Почекаев Р.Ю., Москва, 2006, 178-182]: Փաստերի համադրումը խոսում է Ջեկսոնի կարծիքի օգտին: Ջուվեյնին հաղորդում է, որ Բաթուի հակառակորդ մեծ խան Գույուկի (1246-1248) հրամանով է Արդուն դարուղաչին Բաչուին և նրա մերձավորներին, «որոնք համարում էին այդ տարածքները իրենց սեփականությունը» [Джузейни, Москва, 2004, 363], զրկել ֆինանսատնտեսական լծակներից: «Իր վերահսկողության տակ առնելով այդ երկրների եկամուտները՝ նա ստիպեց այդ մարդկանց ձեռքերը հեռացնել դրանցից» [Նույն տեղում]: Արդունն արգելեց Ջուջի ուլուսի ներկայացուցիչ բասաղադին Բաթու խանի անունից հարկերի հավաքումը: Ինչպես նաև դադարեցրեց այլ չինգիզագունների ներկայացուցիչների լիազորությունները: Իր այդ քայլերով Արդունին հաջողվեց շահել Գույուկի վստահությունը, որը ոչ միայն վերահաստատեց Արդունի լիազորությունները, այլև ընդլայնեց դրանք [Джузейни, Москва, 2004, 363-364]: Վերոգրյալին անհրաժեշտ է հավելել Ռաշիդ ադ-Դինի այն վկայությունը, որի համաձայն Հուլավուի հրամանով Բաչուն, Ջուջիի տոհմին պատկանող գորահրամանատարների հետ մահապատժի է ենթարկվել [Рашид ад-Дин, т. 3, Москва, 1946, 181-182]:

Բաթու խանի կողմնակիցները Արդունի դեմ հրահրեցին Գույուկ խանի գործերի կառավարիչ Քադակ նոյնի հովանավորության տակ գտնվող Թավրիզի բասաղա Մենգու-Բոլադին: Արդունը ստիպված էր փախուստի դիմել՝ հուսալով վերստին ստանալ Գույուկի աջակցությունը: 1248 թ. ապրիլին Թալասում (քաղաք ժամանակակից Կրդաստանի հյուսիս-արևելքում – Լ. Մ.) Արդունը տեղեկացավ Գույուկ խանի մահվան մասին: Նրան այդ մասին հայտնեց Էլջիգիդեյը, որը Գույուկ խանի հրամանով թամաչիի պաշտոնում փոխարինելու էր Բաչու նոյնին [Джузейни, Москва, 2004, 364]:

Գույուկի մահից հետո սկիզբ առած իշխանության համար պայքարն ավարտվեց 1251 թ. Մանգու խանի ընտրությամբ: Վերջինիս գահ բարձրանալուց հետո Էլջիգիդեյը, որի ծառայության մեջ գտնվում էր Արդունը, մահապատժի ենթարկվեց [В. Тизенгаузен, т. I, СПб., 1884, 244-245; Джувейни, Москва, 2004, 426]: Սակայն Արդունին հաջողվեց շահել Մանգու խանի վստահությունը և վերահաստատվել իր նախկին պաշտոնում [Джувейни, Москва, 2004, 432]:

1252 թ. Ղուրուլթայում Բաթու խանին հաջողվեց մասնակի վերահսկողություն հաստատել մերձավորարևելյան տարածաշրջանի նկատմամբ. հարկային մուտքերի մեկ երրորդից մեկ հինգերորդը փոխանցվելու էին Ջուլչի ուլուսին [Jakson Peter, Central Asiatic Journal, 1978, Vol. 22, p. 220]: Կիրակոս Գանձակեցին վկայում է. Ուարդ յեթն հարիւր և երեք թուականին հայոց առաքեաց Մանգու դանն և մեծ զորավարն Բաթու, այր մի ոստիկան, Արդուն անուն, որ ի Գիուզ դանէն առեալ էր հրաման վերակացութեան հարկացն արքունի ի հնազանդեալ աշխարհացն, և ևս գլխաւոր այր ի տանէ Բաթուին, որում անուն էր Թօրա աղա, հանդերձ այլովք բազմօք, որ ընդ նոսա, աշխարհագիր առնել յամենայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդեալ [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 362]: Ջուլվեյնին էլ վկայում է, որ Բաթու խանի ներկայացուցիչ խոջա Նաջմ աղ-Դինը նշանակվեց հարկային գրասենյակի ղեկավար՝ ուլուղ բիթիկճի [Джувейни, Москва, 2004, 374]:

1254 թ. մարդահամարը և պրոգրեսիվ գլխահարկի կիրառումը

1252 թ. մայիսին Մանգու խանը մարդահամարի և դրան հետևելիք հարկային բարեփոխումների անցկացումը հանձնարարեց Արդունին [Джувейни, Москва, 2004, 374]: 1254 թ. Այսրկովկասում ու Հայաստանում անցկացված մարդահամարի ավարտից հետո որոշվեց մոնոլոլներին ենթակա Իրանում, Այսրկովկասում և Հայաստանում կիրառել գլխահարկ (դուփչուր), Գրիգոր Ակներցին վկայում է. «ի ԺԵ տարեկանէն ի վերն գամէնն համարէին մինչ ի վացսուն տարեկանն» [Գրիգոր Ակներցի, Երուսաղեմ, 1974, 33]: Կիրակոս Գանձակեցու տեղեկությամբ հարկատու տղամարդկանց տարիքային ստորին շերտը 11-ն էր [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 362]:

Հ. Մանանդյանի կարծիքով Պարսկաստանում, ըստ հարկատուի կարողության, սահմանվեց 1-7 դինարի հասնող հարկ [Հ. Մանանդյան, հ. Գ, Երևան, 1977, 288]: Հայաստանում այդ հարկաչափը որոշելու համար Մանանդյանը հենվում է Գրիգոր Ակներցու բերած սույն տեղեկության վրա. «յամէն գլխոց որ յամարէին՝ վացՍսՍուն սպիտակ առնուին» [Գրիգոր վարդապետ Ակներցի, Երուսաղեմ, 1975, 33]: Սակայն Ջուլվեյնին, որը, Արդունի քարտուղարը լինելով, քաջատեղյակ և վստահելի աղբյուր է, նշում է. «Նա (Արդունը Լ.Ս) մեկնեց Վրաստան և սկսեց մարդահամար անցկացնել՝ բաժանելով մարդկանց հազարների, առաջին անգամ դուփչուրը սահմանվեց տասը մարդուց յոթանասուն դինար» [Джувейни, Москва, 2004, 375]: Այսինքն՝ Այսրկովկասում և ոչ Իրանում սահմանվեց հաստատագրված հարկ՝ յուրաքանչյուր հարկատուից տարեկան 7 ոսկե դինար, և ոչ թե 1-7 դինար, ինչպես նշում է Հ. Մանանդյանը:

Այսրկովկասում անցկացված մարդահամարից հետո, համաձայն Ջուլվեյնիի, որոշվեց գլխահարկը հավաքել ըստ եկամտի: Սկզբում Արդունը մտադիր էր հարկաչափի ստորին շերտ սահմանել 10 դինարը, ապա ենթադրելով, որ աղքատ խավը ի վիճակի չի լինի վճարել այդ գումարը. «հրամայվեց հարուստների համար դուփչուրի վերին շերտ սահմանել 500 դինար՝ աստճանաբար այն իջեցնելով մինչև 1 դինար՝ ընչազուրկների համար» [Джувейни, Москва, 2004,

375]: Ջուվեյնիի նշած ոսկե դինարը կշռում էր 2,8 գրամ [Бартольд В. Москва, 1968. т. V, 493], իսկ Գրիգոր Ակներցու նշած սպիտակը վրացական միջնադարյան արծաթե դրամն էր՝ թեթրին, որ կշռում էր 2,5-2,7 գրամ [Kirk Bennett, New York, 2020, 48]: Բրիտանացի գիտնական Ջորջ Լեյնը, մեջբերելով Գրիգոր Ակներցու վերոնշյալ տեղեկությունը, սխալվում է, երբ սպիտակը նույնականացնում է ուշբյուզանդական ասպրոնի (հունարենից թարգմանվում է սպիտակ – Լ. Մ.) հետ, որը 2 տոկոս արծաթի ու պղնձի խառնուրդ էր և կշռում էր ընդամենը 4,5 գրամ [George Lane, Iranian Studies, Vol. 32, N. 4, 1999, 467; Philip Grierson, Washington, D.C, 1999, 44]:

Առաջնորդվելով Հ. Մանանդյանի հաշվարկներով, որոնց համաձայն՝ քննվող ժամանակաշրջանում ոսկու ու արծաթի արժեքային հարաբերակցությունը մեկը տասի էր [Հ. Մանանդյան, հ. Գ, Երևան, 1977, 301]՝ պետք է եզրակացնենք, որ Արդունի հարկահանները, չարաշահելով իրենց լիազորությունները, մոտ հինգ անգամ ավելի բարձր գլխահարկ էին հավաքում, քան դրա սահմանված ստորին շեմն էր:

Ըստ Մանգու խանի սահմանած օրենքի՝ հարկային պարտավորություններից ազատվեցին քրիստոնյա ու մուսուլման հոգևորականները [Джувейни, Москва, 2004, 434]: Սակայն օրենքի այդ պահանջը հաճախ զանց է արվել: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Հասան Ջալալ-Դոլան ենթադրաբար 1248-1251 թթ. գահի թափուր լինելու ժամանակամիջոցին, ներկայացավ Բաթու խանին. «առ և զգիր ազատութեան կաթողիկոսին Աղուանից տեր Ներսիսի և ամենայն գոյից նորա և ստացուածոց, զի ազատ և անհարկ լիցի և համարձակ շրջեցի ի վիճակս իշխանութեան իւրոյ ամենայն ուրեք, և մի ոք դիմադարձ լիցի ասացելոցն ի նմանէ»¹ [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 359]: Հայոց եկեղեցու հարկային իմունիտետը հաստատող հրովարտակ Մանգու խանից նրա գահակալման սկզբում ստացել է նաև Սյունիքի Սմբատ Օրբելյան իշխանը. «Եւ հրաման էառ ազատել զամենայն եկեղեցիս Հայոց և զքահանայս» [Ստեփաննոս Օրբելեան, Թիֆլիս, 1910, 411]: Նույն Մանգու խանը 1254 թ. իրեն ներկայացած Հեթում I արքային (1226-1270). «ետ զիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս» [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 367]:

Մարդահամարի անցկացումից հետո Մերձավոր Արևելքում Բաչու նոյոնն ու նրա մերձավոր մոնղոլական ռազմաքաղաքական վերնախավը զրկվեց քաղաքացիական իշխանության լծակներից, որոնք անցան Արդունին: Վերջինիս Ստեփանոս Օրբելյանն անվանում է. «վազիր եւ պասդաղ կարգեալ ի մեծ դանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն՝ հրամանատար ամենեցուն եւ իշխեցող արքունի հարկացն եւ մեծ դիւանին» [Ստեփաննոս Օրբելեան, Թիֆլիս, 1910, 412]: Նրա նստավայրը Թիֆլիսն էր [Նույն տեղում]: Արդունի ենթակա հարկային վերատեսուչները, որոնց նստավայրը ավելի փոքր քաղաքներն էին, կոչվում էին շահնա. «առին զԵմրժակայն յառաջագոյն եւ թողին շահնայ» [Գրիգոր Ակներցի, Երուսաղեմ, 1974, 30]:

Փոխատեղումներ Հյուսիսարևելյան Հայաստանի ավատատիրական վերնախավում

Մարդահամարը, որն անցկացվեց XIII դարակեսին մոնղոլական կայսրության ողջ տարածքում, վճռորոշ նշանակություն ունեցավ նվաճված երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական հետագա զարգացման համար: Այն նշանակալից էր նաև Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրում:

Մողոլական տիրապետության հաստատումից անմիջապես հետո Վահրամ Գագեցին, Ավագ և Շահնշահ Ջաքարյանները ու նրանց ստորակա Ներքին Խաչենի Հասան-Ջալալ Դոլա, Սյունյաց Էլիկում Օրբելյան իշխանները հնազանդվեցին մոնղոլներին. «մեծ եւ անհարկ իշխանք Վրաց և

Աղուանից եղեն ընդ հարկաւ նոցայ՝ որ կամաւ եւ որ ակամայ, եւ տային անխափան զամենայն սահմանեալ հարկսն, այսինքն մալ (հողահարկ – Լ.Մ) եւ թաղար (բանակի մատակարարման հարկ-Լ.Մ.) եւ ինքեանք ըստ ուժոյ եւ ըստ կարողութեան իւրեանց հեծելովք գնային ընդ նոսայ ի խալան (ռազմական ծառայություն – Լ. Մ.)» [Գրիգոր Ակնեցի, Երուսաղեմ, 1974, 26]: Մոնղոլների ռազմավարական նպատակների թվում էր պառակտել Վրացական թագավորության ավատատիրական վերնախավի միասնությունը:

Բրիտանացի հեղինակ Ուիլյամ Ալլենը նշում է, որ Մերձավոր Արևելքում մոնղոլների վարած քաղաքականությունը ենթակա ժողովուրդների և պետությունների նկատմամբ երկակի բնույթ ուներ: Վրաստանն ու Ռուսի սելջուկյան սուլթանությունը մոնղոլական կայսրության ուղեծրում ներառվելուց հետո փորձում էին իրենց ինքնուրույնությունը պահպանել՝ հենվելով Այսրկովկասի նկատմամբ հավակնություն ունեցող Բաթու խանի օժանդակության վրա: Կիլիկյան հայկական պետությունը և բուն Հայաստանի իշխանները, ընդհակառակը, ճանաչեցին Մերձավոր Արևելքում մեծ խաների ներկայացուցիչներ Չարմաղան, ապա՝ Բաչու նոյունների իշխանությունը, ինչի շնորհիվ ոչ միայն պահպանեցին նախկինում ունեցած իրենց դիրքերը, այլև ընդլայնեցին դրանք՝ Կիլիկյան հայկական պետությունը՝ ի հաշիվ սելջուկների, իսկ Առանշահիկ, Օրբելյան, Պռոշյան հայկական իշխանական տները՝ ի հաշիվ վրացական արքունիքը ներկայացնող Ջաքարյանների [Allen W. E, London, 1932, 113]:

Վրաստանի ինքավարությունը վերացնելու Բաչուի մտադրությունը կանխելու նպատակով Ռուսուղան թագուհին (1223-1245) դիմեց Բաթու խանին և նրա օժանդակությամբ որդու՝ Դավիթ Նարինի (1245-1293) հետ Իմերեթից վերադարձավ Թիֆլիս: Դրան ի պատասխան՝ Բաչուն վրաց թագավոր հռչակեց իր թեկնածու Գեորգի IV Լաշայի (1213-1223) որդի Դավիթ Ուլուին (1247-1270): Ինչին հաջորդեց Գույուկ մեծ խանի կողմից 1246 թ. Վրաստանի երկու թագավորությունների բաժանումը [Allen W. E, London, 1932, 113]:

Այդ քաղաքականության շրջանակում էլ Հասան-Ջալալ Դոլան և Սմբատ Օրբելյան իշխանները դուրս բերվեցին վրացական գահի ներկայացուցիչ Ջաքարյանների ենթակայությունից, իսկ նրանց տիրույթները վերածվեցին առանձին թումանների՝ ստանալով ինչուի կարգավիճակ [Լ.Բաբայան, Երևան, 1964, 235-236; Bayarsaikhan Dashsondog, Boston, 2011, 75]: Այդպիսի կարգավիճակ ստացած տիրույթների տերերը ուղղակիորեն ենթարկվում էին մոնղոլ խանին: Ինչուի կարգավիճակ ունեցող հողերից հավաքվող հարկը ոչ թե մտնում էր պետական գանձարան, այլ տրամադրվում էր խանին կամ նրա ընտանիքի անդամներին: Միևնույն ժամանակ ինչուի կարգավիճակ ստացած տիրույթներից գանձվող հարկը հավաքվում էր ոչ թե հարկահավաք պաշտոնյայի, այլ դրա անմիջական ավատատիրոջ կողմից [История Грузии с древнейших времен до 60-х годов XIX века, Тбилиси, 1962, 120-121]:

Այսրկովկասի համար Գույուկ խանի ու Բաթուի միջև վերը նշված հակամարտության շրջանակում պետք է դիտարկել Արդունի և նրա բաղադր Բուդայի (Ջուվեյնին նրան անվանում է Սարիք-Բուդա-մոնղոլերեն շեկ ցուլ-Լ.Մ.) [Джувейни, Москва, 2004, 372] կողմից կիրառած բռնությունները. «չարացուցին գնա ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն ասէին, որ ըմբռնեաց գնա ի մեծ դրանն առաջի ամենայն աւագանոյն, և ընդ բազում պատժօք գնա արկեալ՝ քակեալ զանմարտնչելի բերդս նորա, զոր Խայխանայ բերդ կոչէին, ըստ պարսկական բարբառոյն, և զԴեդն, և զԾիրանաքարն, և զայլ ամրոցս նորուն: Եվ այնպէս հատակեց գնուս,

մինչև հետք անգամ ոչ երևին, թե բնաւ զէն լեալ իցէ: Եւ բագում ոսկի և արծաթ առեալ ի նմանէ, հազիւ զերծավ ի մահուանէ» [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 313]: Այս բնություններին վերջ տալու նպատակով Հասան Ջալալը ստիպված էր, ինչպէս վերը նշվեց, 1248-1251 թթ. ներկայանալ Բաթու խանին, որը. «մեծապատիւ արար և ետ ի նա զհայրենիս իւր զՉարաբերդ և զԱկանայ և զԿարկառն» [Նույն տեղում]: Մակայն Արղունի հալածանքներից Հասան-Ջալալին նույնիսկ դրանից հետո չի հաջողվում ձերբազատվել, ինչը ստիպում է վերջինիս 1255 թ. մահացած Բաթու խանի որդի Սարթախի ուղեկցությամբ մեկնել Ղարադորում և աջակցություն հայցել մեծ խան Մանգուից. «երթեալ էր ցուցանել զաղէտս իւր տեառն տիեզերաց, զոր կրեաց նա յԱրղուն ոստիկանէն, որ հազիւ զերծաւ ի մահուանէն ի սաղրելոյ տաճկացն: Եւ նա ետ նմայ գիր իշխանութեան իւրոյ տիրել սեփականաբար և ոչ երկնչել յումեքէ» [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 373]:

1251 թ. Մանգուին ներկայանում է նաև Սմբատ Օրբելյանը, որը կասկածվում էր 1249 թ. ապստամբ վրաց Դավիթ VI Նարին թագավորին աջակցություն ցուցաբերելու համար [Г. Григорян, Ереван, 1990, 91]: Սմբատը արդարացվում է, իսկ Մանգու խանը Օրբելյանների տիրույթները հռչակում է ինքնավար քաղաքական միավոր: Սմբատը հաշվետու է դառնում միայն մեծ խանին: Դրա հետ կապված՝ Մանգուն հայտարարում է. «գայս մի արքայունս (քրիստոնյային–Լ.Մ.) մեզ պահեսցուք և ոչ տացուք այլ ումեք իշխել ի վերայ դորա: Եւ անուանեցին զնա Ենչու այսինքն տերունի...Եվ եհան զՍմբատ ի դուրս յամանայն դաւթարաց ի Վրաց և յայլոց. և ահա այս կրկին հաստատութիւն եղև հայրենեաց նոցա» [Ստեփաննոս Օրբելեան, Թիֆլիս, 1910, 409, 411]:

Հասան-Ջալալի ու Սմբատ Օրբելյանի կարգավիճակի այդ փոփոխությամբ էր պայմանավորված այս իշխանների տիտղոսների փոփոխությունը. Հասան Ջալալ-Դոլան Գանձասարի վանքի կտիտորական արձանագրությունում իրեն հռչակում է. «բնակաւոր ինքնակալ բարձր ու մեծ Արցախական աշխարհի»¹ [Դիվան հայ վիմագրության, Արցախ, պրակ V, Երևան 1982, 38], իսկ Սմբատ Օրբելյանը Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղին կից Քարկոփի վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու արձանագրությունում կոչվում է արքա [Դիվան հայ վիմագրության, Վայոց ձոր, պրակ III, Երևան, 1967, 207]:

Արղունի գործունեությունից դժգոհ մոնղոլական վերնախավի որոշ ներկայացուցիչների, այդ թվում՝ Ջամալ ադ-Դին Խաս-Խաջիբին և Սևինջ-բեկին հաջողվում իրականացնել ֆինանսատնտեսական գործունեության հաշվետուում և վերջինիս մեղադրել հարկատուների ունեցվածքը բռնությամբ յուրացնելու, չարաշահումների ու զեղծարարության մեջ: Արքունի դատարանը 1256 թ. Արղունին անմեղ ճանաչեց: Արդարացող դատավճռին նպաստեց նաև հոգուտ Արղունի Սմբատ Օրբելյանի տված սուտ վկայությունը: Իր փրկիչ Սմբատի ուղեկցությամբ Արղունը վերադարձավ Այսրկովկաս և սկսեց դաժանորերեն վրեժխնդիր լինել իր հակառակորդներից [Джувейни, Москва, 2004, 373; Ստեփաննոս Օրբելեան, Թիֆլիս, 1910, 413]:

1256 թ.՝ Մանգուի եղբայր Հուլավու խանի (1256-1245) ձեռքբերում տարածաշրջանի իշխանության կենտրոնանալուց հետո, տեղական բնակչության բոլոր խավերի համար իրավիճակը էլ ավելի վատթար դարձավ: Ռազմական լայնածավալ ու ծախսատար գործողությունները, որոնք ծրագրել և իրականացնում էր Հուլավուն, հանգեցրին հարկային բեռի

¹ Պետք է ենթադրել, որ այս արձանագրությունը կատարվել է 1240 թ. տաճարի նավակատիքից հետո:

խիստ ծանրացման: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ բանակի կարիքների համար կիրառվեց սննկացուցիչ թաղար:

Հ. Մանանդյանի հաշվարկներով յուրաքանչյուր հարկատուից գանձվում էր 40 կիլոգրամ ցորեն, 20 լիտր գինի, մոտ 1 կիլոգրամ բրինձ, անասնագլխաքանակի մեկ քսաներորդը և մոտ 50 գրամ կշռող 20 արծաթե դրամ [Կիրակոս Գանձակեցի, Թիֆլիս, 1910, 359-360; Հ. Մանանդյան, , հ. Գ, Երևան, 1977, 289]:

Հուլավուն կիրառեց նաև զորահավաքի նոր համակարգ. զենք բռնելու ունակ տղամարդկանց 20 տոկոսը պետք է զորակոչվեր. «հրամաեաց Ղանն զաւրացն ժողովել Ժ էն երկուքն» [Գրիգոր Ակնեցի, Երուսաղեմ, 1974, 47]:

Վերոշարադրյալն ու մարտական գործողությունների ընթացքում առաջնագծում կռվող հայ-վրացական զորամիավորումների մեծ կորուստները դրդեցին հայ ու վրացի ավատատերերին Դավիթ VI Նարին և Դավիթ VII Ուլու թագավորների գլխավորությամբ ապստամբել:

1259 թ. ապստամբեց Դավիթ Նարինը: Սակայն ուժերն անհավասար համարելով՝ վերջինս հեռացավ Արևմտյան Վրաստան: 1260 թ. ապստամբեց Դավիթ Ուլուն: Ապստամբության պատճառը մոնղոլական բանակի կազմում Եգիպտոս արշավելուց հրաժարվելն էր: Նույն թվականին Ախալդաբիի մոտ Արղունի գլխավորած մոնղոլական 20-հազարանոց և վրացական 8-հազարանոց բանակների միջև տեղի ունեցած ճակատամարտում վրացիների պարտությունը ստիպեց Դավիթ Ուլուին ապաստան գտնել իր ազգական Դավիթ Նարինի մոտ՝ Իմերեթում [Ломинадзе Б. т. III, Тбилиси, 1979, 580]:

Արղունն այս ապստամբությունը օգտագործեց, որպեսզի թալանի կամ հաշվեհարդար տեսնի իր հակառակորդների նկատմամբ. «նիւթեաց ի սրտի իւրում չարութիւն և ի կալանս արար զթագուհին վրաց Գոնցայն (Ավագ Ջաքարյանին այրին, ով ամուսնու մահից հետո ամուսնացել էր Դավիթ Ուլուի հետ – Լ.Մ.), և գդուստր իւր՝ զԽոշաքն, և իշխանն մեծ զՇահնշահ, և զՋալալն Հասան՝ զտէրն Խաչէնոյ, և զայլս բազումս՝ պատճառանօք պարտուց և հարկի յորում բազում գանձս առեալ, հազիւ զերծան ի մահուանէ» [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 391]:

Հայ ավատատիրական բարձր դասի որոշ ներկայացուցիչների նկատմամբ տեղի ունեցած բռնության շարժառիթը անձնական վրեժխնդրությունն էր: Հասան-Ջալալ Դուլան, որն Արղունի ապօրինությունների մասին տեղեկացրել էր Բաթու ու Մանգու խաներին, նրանց մահից հետո զրկվելով հովանավորությունից՝ դարձավ Արղունի վրեժի զոհը: Անասելի բարձր փրկագին պահանջելուց և չստանալուց հետո՝ Հասան-Ջալալը 1261 թ. Ղազվինում տանջամահ արվեց Արղունի հրամանով [Վարդան Արևելցի, Երևան, 2001, 154]:

Արղունի մտերմությունը վայելող Սմբատ Օրբելյանը, որը թշնամանք և ատելություն էր տածում Գոնցայի նկատմամբ, Արղունի աջակցությամբ ստանալով Հուլավուի համաձայնությունը, ջրահեղձ արեց թագուհուն [Ստեփանոս Օրբելյան, Թիֆլիս, 1910, 418]:

Դավիթ Ուլուի զորահրամանատար Սարգիս Ջաղելու հետ գաղտնի հարաբերությունների մեջ մեղադրվող Շահնշահ Ջաքարյանի որդին՝ Ջաքարեն, նույնպես մահապատժի ենթարկվեց: Որդու մահվան բոթին չլիմանալով՝ Շահնշահը վախճանվեց [Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, 393]:

Եզրակացություն

Այսպիսով՝ 1259-1261 թթ. ապստամբությունը Հյուսիսային Հայաստանի ավատատիրական վերնախավում նոր վերադասավորումների տեղիք տվեց: Ավագի ու Շահնշահի մահից հետո թուլացած Ջաքարյանները ետին պլան մղվեցին: Ջաքարյանների Վահրամյան ճյուղը խիստ

թուլացավ: Այս իշխանական տան մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1284 թ. [Ս. Շահնագարյան, «Լրաբեր, հաս. գիտությունների», 1983, թիվ 12, 26-41]: Հասան-Ջալալ Դոլայի մահից հետո նույնը տեղի ունեցավ Ներքին Խաչենի իշխանական տան հետ: Դրան հակառակ՝ Օրբեյանների տունը գլխավորող Սմբատ իշխանին հաջողվեց իր տիրություններին միացնել ներկայիս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը, Արարատի մարզի մեջ մտնող Վեդիի ենթաշրջանը, Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանը: Դավիթ Ուլու թագավորի և Հուլավու խանի աջակցությունը ձեռք բերած Մահկանաբերդի տեր Սադուն Արծրունին, Ավագ Ջաքարյանի դստեր Խոշաքի խնամակալությունը ստանձնելով, կարողացավ վերահսկողություն հաստատել Ավագի տիրությունների նկատմամբ [Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1936, 58-59]:

Գրականության ցանկ

Բարայան Լ., 1964, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, Հայպետհրատ, 598 էջ:

Գրիգոր վարդ. Ակնեցցի, 1974, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, տպարան Սբ Հակոբեանց, 80 էջ:

Դիվան հայ վիմագրության, Երևան, Վայոց ձոր, պրակ III, կազմեց Սեդրակ Բարխուդարյան 1967, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 428 էջ:

Դիվան հայ վիմագրության, Երևան, Արցախ, պրակ V, կազմեց Սեդրակ Բարխուդարյան 1982, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 347 էջ:

Վիրակոս Գանձակեցի, 1961, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պատմություն հայոց, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 533 էջ:

Հակոբ Մանանդյան, 1977, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:

Մելիքսեթ-Բեկ Լ., 1936, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Յերևան, հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 270 էջ:

Շահնագարյան Ա., 1983, Վահրամյանների իշխանությունը մոնղոլների տիրապետության օրոք: ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտությունների հանդես», 12, էջ 26-41:

Ստեփաննոս Օրբելեան, 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, Էլեկտրաշարժ տպարան, 619 էջ:

Ала-ад-Дин Ата-Мелик Джувейни, 2004, Чингисхан, История завоевания мира, Москва, Издательский Дом МАГИСТР-ПРЕСС, 690 страниц.

Бартольд В., 1968. Сочинения. Работы по истории и филологии тюркских и монгольских народов, , т. V, Москва.изд. Наука. 750 с.

Григорян Г., 1990, Ереван, Очерки истории Сюника IX-XV вв., изд.АН АРМССР, 391 страниц.

История Грузии с древнейших времен до 60-х годов XIX века, 1962, Тбилиси, гос. Издательство учебно-педагогической литературы, 254 страниц.

Почекаев Р., 2006, Батый. Хан, который не был ханом, Москва, изд. Евразия, 351 страниц.

Рашид ад-Дин, 1952, Сборник летописей, Москва т.1, изд. изд. Академии Наук СССР, том 1 книга II, 227 страниц.

- Рашид ад-Дин, 1946**, Сборник летописей, т. 3, Москва, изд. Академии наук СССР, 188 страниц.
- Тизенгаузен В., 1884**, Сборникъ материаловъ относящихся к исторіи Золотой Орды, т. I, СПб 564 страниц.
- Allen W., 1932**, A History of the Georgian People, London, 432 pages.
- Bennett Kirk 2020**, The Tiflis Dirhams of Möngke Khān (Numismatic Notes and Monographs), New York, American Numismatic Society, 181 p.
- Bayarsaikhan Dashsondog, 2011**, The Mongols and the Armenians (1220-1335), Boston, Brill's Inner Asian library, 288 p.
- Grierson Philip, 1999**, Byzantine coinage, Washington, D.C., Dumbarton Oaks Research Library and Collection, 76 pages.
- Jakson Peter, 1978**, The Dissolution of the Mongol empire. Central Asiatic Journal, Vol. 22, pp. 183-236.
- Lane George, Arghun Aqa: Mongol Bureaucrat, Iranian Studies, volume 32, number 4, pp. 459-482.
- Morgan D. 1982**, Who Ran the Mongol Empire?' Journal of the Royal Asiatic Society , N. 1, pp. 127-136.
- The Secret History of the Mongols, Provided with an exegetical Commentary by Francis Cleaves, 1982, London, Published for the Harvard-Yenching Institute, Harvard university press, 277 p.